



Action funded by
the European Union

EU4Environment

Armenia, Azerbaijan, Belarus, Georgia, Republic of Moldova, Ukraine

ՌԱՄԱ Շահառուների Խմբի հանդիպում, նվիրված

Ռեսուրսարդյունավետ և Մաքուր Արտադրություն (ՌԱՄԱ) գործողություններին, Հայաստանում ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի Գործողության շրաջանակներում

ՕՐԱԿԱՐԳ

28 Հունիս 2022

Գրանցում. 9:00

Սկիզբ. 9:30

Ավարտ. 13:00

Վայրը . Անի Գրանդ Հյուրանոց
Հանրապետության փ. 65,
Երևան 0010

Լեզուն ` Հայերեն

(անգլերեն համաժամանակյա թարգմանությամբ)

Action implemented by:



THE WORLD BANK
IBRD • IDA | WORLD BANK GROUP



Action funded by the European Union

EU4Environment

Armenia, Azerbaijan, Belarus, Georgia, Republic of Moldova, Ukraine

Հանդիպման նպատակները և ակնկալվող արդյունքները

ՌԱՄԱ Շահագրգիռ կողմերի խմբի հանդիպման նպատակն է ներկայացնել Հայաստանում ԵՄ կողմից ֆինանսավորվող «Հայաստանում ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» Գործողության շրջանակներում իրականացվող ռեսուրսարդյունավետ և ավելի մաքուր արտադրություն (ՌԱՄԱ) գործունեության ընթացիկ արդյունքները և քննարկել դրանց կիրառումը ընտրված ոլորտներում սննդի արբտադրություն/գյուղատնտեսություն (ներառյալ ձկնաբուծություն), շինանյութերի և քիմիական նյութերի (ներառյալ պլաստիկ) արտադրություն: Միջոցառման նպատակն է կիսել արդյունաբերության փորձը և քննարկել առաջարկությունները Հայաստանում արտադրական ձեռնարկությունների, դրանց մատակարարման շղթաներում և հարակից այլ ձեռնարկություններում ՌԱՄԱ և շրջանաձև տնտեսության խթանման հնարավորության վերաբերյալ՝ անդամ կազմակերպություններ ՌԱՄԱ շահառուների խմբի համապատասխան շահագրգիռ կողմերի աջակցությամբ:

Հանդիպման հիմնական թեմաներն են.

- Հայաստանյան հասարակության և բիզնես ոլորտում ռեսուրսների արդյունավետության և ավելի մաքուր արտադրության օգուտների խթանում:
- «Հայաստանում ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» գործողության «Շրջանաձև տնտեսություն և աճի նոր հնարավորություններ» բաղադրիչի վերաբերյալ Հայաստանում իրագրվածության բարձրացում:
- 2017-2022 թթ. և մինչ այսօր, Հայաստանում ՌԱՄԱ գործունեության իրականացման ձեռքբերումների և ծրագրերի քննարկում:
- Շրջանաձև տնտեսության ներդրման համար Հայաստանում նոր հնարավորությունների ուսումնասիրում:

Մասնակիցներ

Հանդիպմանը ներկա կլինեն շուրջ 20 մասնակիցներ՝ ՌԱՄԱ շահառուների խմբի անդամներ ՀՀ կառավարությունից, բիզնես ոլորտից, քաղաքացիական հասարակությունից և այլ կարևոր ինստիտուցիոնալ շահագրգիռ կողմերից: Ներկա կլինեն նաև Շրջակա միջավայրի և էկոնոմիկայի նախարարության (Գործողության ազգային կոնտակտային անձինք), Հայաստանում ԵՄ պատվիրակության, «ԵՄ-ն

Action implemented by:





Action funded by the European Union

EU4Environment

Armenia, Azerbaijan, Belarus, Georgia, Republic of Moldova, Ukraine

հանուն շրջակա միջավայրի» գործողության ազգային և միջազգային գործընկերները՝ ներառյալ UNIDO-ն և այլ կազմակերպությունների ու ծրագրերի ներկայացուցիչներ:

Գործնական տեղեկատվություն

Հանդիպումը տեղի կունենա 2022թ. հունիսի 28-ին, Անի Գրանդ Հոթել հյուրանոցում, որը գտնվում է Հանրապետության 65, 0010, Երևան հասցեում: Հանդիմպան ընթացքում կտրամադրվի համաժամանակայա հայերեն և անգլրենե թարգմանություն:

Կազմակերպիչ

UNIDO-ի ազգային իրականացնող գործընկեր՝ Կովկասի Տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի Հայաստանյան Գրասենյակ:

Բովանդակություն

ՌԱՄՄ-ի հետ կապված գործողությունները ԵՄ կողմից ֆինանսավորվող «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» գործողության «Շրջանաձև տնտեսություն և աճի նոր հնարավորություններ» 2-րդ բաղադրիչի մի մասն են: Այս գործողությունները նպատակ ունեն.

- ✓ Տրամադրել ՌԱՄՄ կարողությունների զարգացման, ինչպես նաև ցուցադրական ծրագրեր մասնագետներին և ձեռնարկատերերին, ինչպես նաև ՌԱՄՄ միջոցառումների ներմուծման համար արդյունաբերություններին տրամադրել տեխնիկական աջակցություն՝ դրանով իսկ նպաստելով շրջանաձև տնտեսության անցմանը:
- ✓ Խթանել ՌԱՄՄ իրականացմանն ու ընդլայնմանը փոքր և միջին ձեռնարկություններում. ընտրված արտադրական ձեռնարկություններում ընդլայնելով ազգային կարողությունները՝ ցուցադրական աուդիտների միջոցով:
- ✓ Խթանել ՌԱՄՄ-ին և շրջանաձև տնտեսության սկզբունքներին ու գործելակերպին՝ հիմնված լավագույն միջազգային և ազգային փորձի վրա:

Գործողությունը նպատակ ունի բարելավելու գիտելիքները, տեղեկացվածությունը և շահառուների հետ հաղորդակցությունը, ինչպես նաև ծառայելու ՌԱՄՄ-ի օգուտների փոխանցմանը հետևյալի կերպ. 1) փոքր և միջին ձեռնարկությունների ռեսուրսների արտադրողականություն և բնապահպանական արդյունավետություն; 2) ապրանքների և ծառայությունների որակի բարելավում; 3) լրացուցիչ տնտեսական և բնապահպանական օգուտների ստեղծում, ձեռնարկությունների առողջության և անվտանգության պայմանների ուժեղացում:

Action implemented by:





Action funded by the European Union

EU4Environment

Armenia, Azerbaijan, Belarus, Georgia, Republic of Moldova, Ukraine

«ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրի մասին

«ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրի նպատակն է օգնել Արևելյան գործընկերության վեց երկրներին. Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Բելառուս, Մոլդովայի Հանրապետություն և Ուկրաինա, պահպանել և արդյունավետ օգտագործել բնական հարստությունը, ամրապնդել մարդու շրջակա միջավայրի բարեկեցությունը և խթանել տնտեսական աճը:

Գործողությունը ֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից և իրականացվում է 5 գործընկեր կազմակերպությունների միջոցով. ՏՀԶԿ, ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիր, ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով, ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպություն, Համաշխարհային բանկ:

Բյուջե՝ 20 միլիոն եվրո; Ժամկետը՝ 2019-2022թթ:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել տիկին Տատյանա Չերնյավսկայային՝ t.chernyavskaya@unido.org – UNIDO ծրագրի ղեկավար: Տիգրան Օզանեզովին՝ հանրային կապերի փորձագետ, Կովկասի Տարածաշրջանային Բնապահպանական Կենտրոն, toganezov@yahoo.com, հեռ. +37411575148:

ՕՐԱԿԱՐԳ

Սողերատոր: Նունե Հարությունյան, «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ՌԱՄԱ ծրագրի ազգային համակարգող

9:00 – 9:30	Գրանցում և սուրճ	
9:30-10:00	Բացման խոսքեր <ul style="list-style-type: none"> • Շրջակա միջավայրի նախարարություն • Էկոնոմիկայի նախարարություն • Հայաստանում ԵՄ Պատվիրակություն • UNIDO 	<p>տկն. Գայանե Գաբրիելյան, Նախարարի տեղակալ</p> <p>տկն. Անի Իսախրյան, Էկոնոմիկայի նախարարի տեղակալ</p> <p>պրն. Անդրեա Բաջիոլի, ԵՄ պատվիրակության Համագործակցության պատասխանատու</p>

Action implemented by:





Action funded by
the European Union

EU4Environment

Armenia, Azerbaijan, Belarus, Georgia, Republic of Moldova, Ukraine

		տկն. Տատյանա Չեռնյավսկայա UNIDO ծրագրի ղեկավար տկն. Անահիտ Միմոնյան, Հայաստանում UNIDO Ներկայացուցիչ
10:00 - 10:15	Ծրագրի առաջընթաց. ծրագրի գործողությունների ամփոփում	տկն. Նունե Հարությունյան, Ծրագրի Ազգային Համակարգող
10:15:10:30	Ծրագրի շրջանակներում նոր բաղադրիչներ. Հայաստանում ԵՄ միասնական շուկայի ներկայացում Կանաչ Արտադրանքի համար՝ ՌԱՄԱ ակումբների դերը ՌԱՄԱ-ի ընդլայնման համար	տկն. Տատյանա Չեռնյավսկայա
10:30 – 10:40	Հարց և պատասխան	
10:40 – 11:10	EaP GREEN կազմակերպություններ մոնիթորինգի և նախնական գնահատման արդյունքները	տկն. Դշխուհի Սահակյան և պրն. Տիգրան Մեկոյան «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» տեխնիկական փորձագետներ
11:10 – 11:30	Հարց և պատասխան	
11:30 – 11:40	Սուրճի ընդմիջում	
11:40 – 12:00	ՌԱՄԱ ինստիտուցիոնալացում և առաջընթացի ուղի. - Ընթացիկ իրավիճակի ուրվագիծ (2014-2022 թթ.), առաջիկա «Գործարար նկարագրի» հրատարակությունը - ՌԱՄԱ գիտելիքների կառավարման և ինստիտուցիոնալացման աջակցություն	տկն. Նունե Հարությունյան
12:00 – 12:30	Քննարկում Հայաստանում ՌԱՄԱ-ի հետագա ներդրման և ինստիտուցիոնալացման վերաբերյալ առաջարկությունների և հարցերի շուրջ	Մասնակիցներ
12:30 – 13:00	Արձագանքներ, ամփոփում և քննարկում	Մասնակիցներ

Action implemented by:

